

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
«ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՄՈՒԼ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Անցյալ դարի վերջին տասնամյակների արևմտահայ գրականության զարգացման ընդհանուր ընթացքը դժվար է պատկերացնել առանց «Արևելյան մամուլ» պարբերականի, որը հասարակական մտքի ամբիոնի իր դերն ամբողջացրել է գեղարվեստական գրականության ասպարեզում և, որպես կարևոր հրատարակություն, արտացոլել է գրականության զարգացման բնութագրական որոշակի կողմերը¹։ Ընդհանուր առմամբ «Արևելյան մամուլը» տպագրել է ռոմանտիկական երկեր՝ իրողություն, որ պայմանավորված էր նրա խմբագիր Մ. Մամուրյանի գեղագիտական նախասիրություններով։

Իր հրատարակության սկզբնական շրջանում (1870-ական թթ.) տպագրականը հակված էր դեպի պատմահայրենասիրական ռոմանտիկան։ Նրա էջերում տպագրվել են Գ. Պատկանյանի «Վահագն», «Զարմայր և Պանթելեն», «Մտածություն և վիշտք Լխուրյան գետակի», «Ծերն ի Մասիս» ստեղծագործությունները։ Գաղթօջախի իր հեռավորությունից հանդեսը գնահատում էր ոչ թե Պատկանյանի պահպանողական գաղափարները կամ պարզաբան լսառն լեզուն, այլ ազգային վաղեմի փառքի և ինքնության գաղափարների վերհանումը։ Ի դեպ, «Արևելյան մամուլը» ընդարձակ տեղ է հատկացրել արևելահայ գրականությանը՝ առաջնորդվելով ազգային վերամիավորման սկզբունք գաղափարով։ Հայ հատվածների գրական լեզուների օրգանական ներթափանցումը և գրական միասնական ազգային լեզվի ստեղծումը պարբերականը չէր պատկերացնում այլ կերպ, քան գրական ու մշակութային արժեքների փոխադարձ շփումներով։ 1870-ական թթ. «Արևելյան մամուլը» տպագրել է Ռ. Պատկանյանի, Մ. Սաղաթյանի, Մ. Նալբանդյանի և Բաֆֆու ստեղծագործությունները։ Այստեղ է առաջին անգամ տպագրվել Մ. Նալբանդյանի «Արկածք Աղամա» պոեմի Ա մասը (նշվում է, որ խմբագրության տրամագրության տակ եղած ձեռագիրն ամբողջական չէ)²։

«Արևելյան մամուլի» ինքնուրույն գրականությունը հիմնականում զարգացրել են նրա խմբագիրն ու աշխատակիցները։ Մամուրյանը տպագրել է «Սեփիլենց տունը», «Տիրայր կամ մեծ մարդ» ռոմանտիկական կատակերգությունները։ Հայրենասիրության, ազգապահպանության, քաղաքացիական առաքինության որակները այն մեծություններն են, որոնց, ի վերջո, դիմում են նրա գրական հերոսները։ «Սեփիլենց տունը», ըստ էության, ներկայացնում է արևմտահայ իրականության մանրանկարը՝ սկսած ամիրա Ասատուրից և վերջացրած գավառացի Ավոնով։ Զավեշտը կառուցված է աշխույժ գործողության, սրամիտ երկխոսության հիման վրա, սակայն դրանք չեն փոխում

1 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Նրևան, 1964, էջ 36։

2 «Արևելյան մամուլ», 1874, էջ 382։

ստեղծագործության ստատիկ նկարագիրը, քանի որ ուղղանկյունական կերտ-
վածքի հերոսները կամ արդեն որոշակիորեն ձևավորված բնավորություններ
են և կամ էլ ապրում են բարոյական այնպիսի կտրուկ շրջադարձեր, որոնք
հակասում են այդ բնավորության տրամաբանությանը³։ Կատակերգության
վերջաբանը ևս ղուտ ուղղանկյունական բնույթ ունի՝ բացասական հերոսը հան-
կարծակի փոխում է իր համոզմունքները և դառնում հայրենասեր։ Մամուլ-
յանը զավեշտին սլարտադրել է իր գաղափարը՝ հայ հարուստները սկսեցին
հրաժարվել եսամոլ կենցաղից և հասնեն ազգային ինքնագիտակցության։ Սո-
ցիալ-հասարակական բոլոր հարցերը Մամուլյանը լուծում է ազգային միա-
բանության, հայրենասիրության գաղափարի մեջ և այս իրողությունը առավել
քան մերկապարանոց է դարձրել նրա ուղղանկյունական միտումը։

«Տունեն դուրս» զավեշտում մատնացույց է արվում բնաշխարհում հա-
րուստների հաստատվելու և ազգի սոստեսակուն զարգացմանը նպաստելու
հնարավորությունը։ Մամուլյանը շեշտը դրել է ոչ թե ինքնամոլ հարստի հո-
գևոր վերածնության, այլ նրա և շրջապատի փոխհարաբերության վրա։ Դրամա-
տերը բնաշխարհին սկսեցին նայել ոչ թե որպես հարստանալու աղբյուրի, այլ
ազգային-հայրենասիրական բարձունքներից։ Հեղինակը երգիծել է լրագրա-
պետ Սևոստու պաթետիկ ու ճոռում ոճը, նրա անձնական նպատակների և վե-
րամբարձ խոսքի հակասությունը։ Գրչականի այս բնութագրական գիծը խա-
րաղանվել է նաև մեր խոշոր երգիծաբանների՝ Հ. Պարոնյանի և Ե. Օտյանի
ստեղծագործություններում⁴։ Կատակերգության մեջ հայրենասիրական գա-
ղափարները հակադրված են անձնական մանրախնդրությանը, սակայն Մա-
մուլյանն այդ գաղափարները շարժման մեջ չի դրել համապատասխան գե-
ղարվեստական արտահայտչամիջոցներով։

Արևմտյան Հայաստանը դրամատիկների միջոցով տնտեսապես զարգաց-
նելու գաղափարը Մամուլյանին շարունակել է հուզել նաև հետագայում։ Սա-
կայն գրողի այդ հույսերը կյանքում երբեք չեն իրականացվել, որը և արտա-
հայտվել է նրա երրորդ՝ «Տիրայր կամ մեծ մարդը» կատակերգության մեջ։
Հարուստ վաճառական Ղազարը օժտված է ռեալիստական որոշ գծերով։ Ժո-
ղովրդականությունն ապահովելու նպատակով նա շարաշահում է շրջապատի
հայրենասիրական զգացումները՝ կեղծ խոստումներ տալով Արևմտյան Հա-
յաստանում երկրագործությունն ու արհեստները ծաղկեցնելու վերաբերյալ։
Հայ հարուստների հասարակական առաքելության հանդեպ իր խորին հիաս-
թափությունը Մամուլյանը հայտնում է հայաստանցի Վահրամի միջոցով և
ապավինում ժողովրդի կենսական ուժերին։

1890-ական թթ. Մամուլյանը հանդեսում տպագրեց իր «Իմաստասեր
մանկիկ մը» վիպակը։ Հեղինակը անխնա քննադատության է ենթարկել արև-
մրտահայ բուրժուա-բաղբենիական ընտանիքի օտարամոլությունը։ Ի տար-
բերություն նախորդ երկերի, Մամուլյանը հասարակական այս իրողությունը
վերարտադրել է կոնկրետության մեջ։ Ափիոնի և ձկան վաճառականի ընտա-
նիքը ցուցադրված է իր կենցաղի հատկանշական գծերով, կենդանի իրադրու-
թյան մեջ։ Մանկիկի հուշերով բացահայտված է բարգավաճող վաճառականի

³ Է. Զ. Զրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1972, էջ 124—125։

⁴ Գ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյան, Երևան, 1956, էջ 119։ Ա. Մակարյան, Օրվանդ Օտյան, Երևան, 1965, էջ 83։

բարոյական կողմնորոշումը, արհամարհանքը այն ամենի հանդեպ, ինչ կաշկանդում է սեփական բարեկեցությունը: Վիպակում կան դարգացող, դինամիկ կերպարներ՝ հանձին Թաթևիկի և նրա մոր, որ պետք է համարել Մամուրյանի ստեղծագործական առաջընթացը: Դա հնարավորություն է տվել նրան՝ առավել ձգձարտացի պատկերել իր քննադատած օբյեկտը, որ վերաճում է ժամանակի ալլասերված բարքերի կտրուկ քննադատության: Վերնախավի ապազգայնացման և բարոյազրկման պրոցեսը Մամուրյանը առնչում էր ազգային դաստիարակությունից նրա կտրվելու հետ:

Վիպակում հասարակական բարոյականության և ընտանեկան բարքերի բարենորոգման երաշխիքը լծորդված է անհատի ալտրոիստական պարտավորությունների գիտակցմանը: Մամուրյանի այս, ինչպես և նախորդ ստեղծագործություններում ռոմանտիզմի հենքը երևում է և՛ հերոսների ընտրությունը, և՛ նրանց գոթոդոլությունների պատճառաբանվածությունը նկատի առնելիս: Մամուրյանի երկերում գաղափարները միջավայր են թափանցում դրսից և ոչ թե ալլ միջավայրի հակասական զարգացման արդյունքն են: Գաղափարի՝ միջավայրի մեջ թափանցելու և իրեն վերջինին հակադրելու խնդիրը այն հենքն էր, որի վրա հանգչում էր Մամուրյանի և, ընդհանրապես, ռոմանտիկական հայեցողությունը:

Մամուրյանի գեղարվեստական կարողությունները և գաղափարական ձգտումներն առավել ամբողջականորեն են արտահայտվել «Ան լեռին մարդը» վեպում: 1871—1881 թթ. «Արևելյան մամուլում» տպագրվել է վեպի մի մասը: Այնուհետև, սուլթանական գրաքննությունը թույլ չի տվել դրա տպագրությունը, որովհետև վեպը հագեցած էր ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությամբ: Հ. Մամուրյանի՝ հետադաշի ակնարկից պարզ է դառնում, որ գրաքննությունը արտաքու կարգի տալն ապ է ունեցել վեպի կապակցությամբ: «Հարկ եղած թուղթերը (ձեռագրի— Ա. Խ.) հոս ու հոն փոխադրելիս ձանձրացած և հուսահատացած՝ ստիպվեցանք բոցերու հանձնել շատ կարևոր ձեռագրերն երու և անձնական նամակներու հետ՝ և միանգամ ընդմիջտ մղձավանջե մը աղատիլ»⁵,— գրում է նա: Անտարակույս, վեպը չի ավարտվել հենց այդ, ինչպես և ազգային հետադիմականների հետապնդումների պատճառով:

Վեպի գեղարվեստական արժեքը ամենից առաջ պայմանավորված է ներանով, որ այն բովանդակում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարը: Երկն արտացոլում է պարսիկների և թուրքական բռնապետության դեմ XIX դարի սկզբներին մղված ժողովրդական պայքարի իրողությունը: Թեև վեպն անդրադարձնում է 1820—1830-ական թթ. իրականությունը, սակայն ակնառու է, որ գրվել է 1870-ական թթ.՝ ռուս-թուրքական պատերազմից առաջ ու դրանից հետո և նպատակ ունի անդրադառնալ հենց այդ ժամանակաշրջանին: Հեղինակի գաղափարական միտումները ցարիզմի, Թուրքիայի ու եվրոպական տերությունների փոխհարաբերության շուրջ, ըստ էության, վերաբերում են արևելյան ճգնաժամին և Հայկական հարցին: Հիմնականում

⁵ Է. Դ. Զրբաշյան, նշվ. աշխ., էջ 427:

⁶ Խ. Մամուրյան, Ան լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 341:

⁷ Ստաթեոս Մամուրյան, երկեր, Երևան, 1966, էջ 30 (Հ. Ղազարյանի առաջարկով):

արտահայտելով հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը Ռուսաստանի նկատմամբ, Մամուրյանը ցուցադրել է նաև դեմոկրատիայի դժգոհությունը ցարիզմի գաղութային քաղաքականությունից:

Բռնապետության դեմ ժողովրդի մղած ազատագրական պայքարը մարմնավորում է Ռշտենց Զորան, որ վիպական անձնավորություն է: Քրդերի հետ ընդհարվելուց հետո նա թողնում է Արեմտյան Հայաստանը և միանում պարսիկների դեմ մարտնչող ռուսական զորքերին: Պարսիկների դեմ նա կռվում է մինչև Երևանի բերդի գրավումը: Մամուրյանը նրան պատկերել է նաև մասնայական տեսարաններում, սասունցի գեղերի հետ մաքառելիս, ճակատամարտերի ալլևալլ պահերին:

Մամուրյանը ճշմարտացիորեն է պատկերել ժամանակաշրջանի բնութագրական ոգին՝ ցույց տալով ռուսներին որպես ազատարարներ ընդունող հայ ժողովրդի ոգևորությունը: Նա դիմել է ստեղծագործական հաջող հնարանքի՝ ժողովրդի ազատագրական ձգտումները համադրելով հայրենի վայրերի ռոմանտիկ-հայրենասիրական նկարագրությանը: Հաջողությամբ են զուգորդված նաև այդ բնությունն ու ազգային-պատմական հիշատակները, գեղարվեստական միջոց, որին դիմում էր ժամանակաշրջանի հայ ռոմանտիկական պատմավեպը⁸: Բնության հզոր տարերքը և մարդը վեպում հանդես են եկել միաձուլված, որ ընդգծում է ազատության դադափարը: Այս սկզբունքով է կերտված Ատոմի կերպարը: Սա ևս հայրենասիրական գաղափարների կրող է, հերոսական անձնավորություն, Զորայի զինակիցը: Ատոմը հայ զինված մշակի անձնավորումն է: Նրա միջոցով հեղինակն արտահայտում է ազատագրական պայքարի իր մտորումները՝ բավական չէ սոսկ հայրենիք ժառանգելը, պետք է կարողանալ պահպանել այն՝ զոհվելով հարկ եղած դեպքում: Մամուրյանը առաջ է քաշում ազատագրական պայքարի՝ դեմոկրատական գաղափարախոսության մի կարևոր տեսակետը, ազատության համազգային գիտակցությունը. «Մինչև որ մենք ալ ազատության ճշմարիտ զավակները չդառնանք, հայությունը փրկվելիք չունի»⁹. — ասում է Ատոմը:

Հայրենիքը կարելի է ետ նվաճել ոչ թե նրա նկատմամբ պատմական իրավունքների վկայակոչումով, այլ սրով. այս է հեղինակի առաջադիր գաղափարներից մեկը:

Ազատագրական պայքարի մեջ Մամուրյանը հոգևորականության դերը բնորոշում է ըստ այն հայեցակետի, ինչ քանիցս արտահայտել է իր հրապարակախոսության մեջ: Նա պախարակել է կղերի հասարակական արատները, ստրկամտության քարոզը, որին հակադրել է հայրենասեր հոգևորականության գաղափարը: Իդեալական կրոնավորը Մամուրյանի համար ներսես Առաքելեցին է, որ վեպում հանդես է գալիս որպես զինվոր-հոգևորական: Ներսեսը օժտված է դեմոկրատական գծերով և զորեղ բանականությամբ: Սակայն նա մնում է սոսկ վիպականի սահմաններում և հանդես է գալիս ոչ թե գործողության մեջ, այլ հայրենասիրական ճառերով: Գործող հոգևորականի կերպար է Ավաղը, Զորայի մարտական ընկերը:

Մամուրյանի դեմոկրատիզմն ունի լայն շրջանակներ և դուրս է գալիս ազգայինի սահմաններից: Մասնավորապես, դա արտահայտվել է ռուս ժո-

⁸ Ս. Սարիսյան, Մերենց, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 30:

⁹ Մ. Մամուրյան, Սև լեռին մարդը, էջ 49—50:

ղողորդի նկատմամբ նրա տաժած համակրական խորին զգացումների մեջ: «Ընկերասեր», «զվարթ և գործունյա» այդ ժողովուրդը վեպում կտրուկ հակադրված է ցարիզմի բռնակալական էությանը: Լեվին, Մամուրյանը կարողացավ հասնել պատմականորեն արդարացված այն եզրակացությանը, որ սոցիալ-քաղաքական կապանքներից Ռուսաստանի և ռուս ժողովրդի ազատագրությունը գերաճելու է միջազգային նշանակության¹⁰: Այս գաղափարով Մամուրյանը համերաշխում էր հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանին, որը Ռուսաստանի ազատագրման հետ էր առնչում ռուսաստանյան կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների, այլև հայ ժողովրդի ճակատագիրը¹¹: Ընդ որում, Մամուրյանը մարգարեանում էր ժողովուրդների ապագա միավորումը գոտեորող ազգային-քաղաքական հիմքերի բնութագրման հարցում. «Գեթ ապագային մեջ,— գրում էր նա,— կերեակայեմ նոր Ռուսիա մը, չէ՛թե զատ-զատ տերություններու բաժնված. զատ-զատ կառավարությանց ներքե, այլ դաշնակցական Ռուսիա մը՝ ամեն հարստական կապերե ազատ, որու այլադեմ ու այլասեռ ժողովուրդները ինքնօրինակյամբ պիտի վարեն, կառավարեն իրենց հատուկ շահերն»¹²:

Վեպում լայն հենքի վրա ցույց է տրված նաև Կովկասի ժողովուրդների բարեկամությունը: Գլխավոր հերոսներից Նուրեմը՝ ծպտված վրացուհին, աչքի է ընկնում իր քաջությամբ և ռազմական տաղանդով: Նուրեմին հեղինակը կոչում է ազատության զավակ, որին բնությունը շնորհել է «դյուցազնի աննկուն և հզոր հոգի մը»:

«Սև լեռին մարդը» ազգային-ազատագրական պայքարի վիսպական-ռոմանտիկ արտահայտությունն է, նրա հերոսների գործողություններն ու փոխհարաբերություններն իրականանում են այդ առանցքի շուրջ: Արտահայտելով ազատագրական շարժման տրամադրությունները, Մամուրյանը փորձում էր իրականության մեջ որոնել դեպի այդ նպատակը տանող ուղիները: Այս իմաստով այս պատմավեպը ևս, ինչպես խնդրո սուարկա ժամանակաշրջանում ընկճված ժողովուրդների ռոմանտիկական ստեղծագործություններն ընդհանրապես, նախորդում էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանը և գաղափարապես նախապատրաստում այն, իրողություն, որին անդրադարձել է բուլղարացի պրականագետ Կ. Գենովը¹³:

Վեպը մնացել է անավարտ և այս հանգամանքը դժվարացնում է դրա գեղարվեստական ու գաղափարական արժեքների ամբողջության բնութագրումը: Սակայն ազատագրական պայքարի իր ընդդժված նպատակամիտումով և կրքոտ տենչով, այլև խորին դեմոկրատիզմով այն համահնչյուն է դառնում հայ գրականության այն օբյեկտիվ մղումներին, որի արտահայտությունն էին նաև Բաֆֆու և Մերենցի պատմավեպերը:

1880-ական թթ. «Արևելյան մամուլի» արձակի հաջողված օրինակ էր Կ. Փաշայանի «Վարժապետին պղատոնական սերը» վիպակը: Ըստ էության, հեղինակը նպատակ է ունեցել պատկերելու գավառական իրականությունը:

¹⁰ Մ ա ա թ ե ո ս Մ ա մ ու Ր յ ա ն, Երկեր, էջ 43—44:

¹¹ Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1948, էջ 61:

¹² Մ. Մ ա մ ու Ր յ ա ն, Սև լեռին մարդը, էջ 166:

¹³ Կ. Հ ա յ Ր ա պ ե տ յ ա ն, Կրստյու Գենով. ռոմանտիզմը բուլղարական գրականության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 262:

և կարողացել է հասնել դրան կենցաղային սովորությունների, աշխատավոր մարդկանց առօրյայի և նիստուկացի պատկերման շնորհիվ: Միաժամանակ, վիպակը բողոքի շեշտ ունի հետամնացության, ընտանիքում հոր բռնակալության դեմ: Նշմարվում են նաև բողոքի տրամադրություններ՝ թուրք և քուրդ հարստահարիչների կամայականության օրինակներ և այլն: Ստեղծագործությունը թույլ է վիպական կառուցվածքի և կերպավորման տեսակետից, սակայն ուշագրավ է ազգագրական տարրի հարստությամբ:

Կնոջ ազատագրման թույլ արձագանքն է հնչում Մենիկի (Թ. Շիշմանյան) «Գարնան մի ասուպ» պատմվածքում: Թեմատիկայի ընդհանրություն ունենալով Տյուսաբի ստեղծագործության հետ, այն, սակայն, դիջում է ալդ հեղինակի արվեստին և գաղափարական խորությանը:

1870—1880-ական թթ. պարբերականի չափածո ստեղծագործությունները աչքի չեն ընկնում իրենց գեղարվեստական արժանիքներով, սակայն ունեն ազդային-սոցիալական բնույթ ունենալով: դեմ ուղղված հրապարակախոսական շեշտված միտումներ: Ընդ որում, լուսավորության պրոպագանդը հանդես է գալիս որպես ալդ բնությունների դեմ ծառանալու միջոց: Այս տրամադրություններն ունեն Գ. Ռշտունու «Մեռնինք, ալ չապրինք», Ասպետի «Դու աստ, կատու» և այլ բանաստեղծություններ: «Արևելյան մամուլի» դեմոկրատական գաղափարները, սկսած 1880-ական թթ., սնուցվում էին գավառական իրականությունից. երես շրջելով քաղաքի սոցիալական ներհակություններից, բարբերի նորօրյա հեղաբեկումներից, պարբերականի բանաստեղծներն ապավինում են գյուղին: Սակայն բուն իսկ գավառական իրականության պատկերը նրանց մտայնության մեջ ամբողջական չէ հասարակական առումով, որչափով նրանք կամ վերանում են օբյեկտի ներքին հակասություններից և կամ սահմանափակվում գավառական զորեղների քարոջախոսական քննադատությամբ: Այս շրջանում պարբերականի բանաստեղծները դիմում են նաև իրականության թշվառ զոհերի պատկերմանը՝ օգտագործելով սուր հակադրությունների իրական պատկերներ: Բայց այս դեպքում ևս ալդ պոեզիան ավելի շատ բողոքող է, քան մարտնչող, հայեցող քան եզրակացության հանգեցնող: Այդպիսին են Կ. Խոսքանցի, Վեհակնի, Աղուարդի և այլոց բանաստեղծությունները: Ընդհանրապես հանդեսի չափածոն արժեքավոր է ոչ այնքան գեղարվեստական, որքան հասարակական առումով: Ուշագրավ են «Արևելյան մամուլի» հակակղերական բանաստեղծությունները, որոնց մեջ հիմնական ուշադրությունը դարձված է կղերի մակաբույծ նկարագրի, ինչպես և այն առաջադիմական գաղափարի վրա, որ եկեղեցին սպանում է անհատի ներքին ազատությունը, ուրեմն և կաշկանդում նրա ազատագրական մղումները: Այս կողմերով է հատկանշվում Ասպետի «Մեր հայր սուրբ» հաջողված բանաստեղծությունը:

Կղերական մտայնությունն ու եկեղեցու հասարակական վարքագիծը խիստ քննադատության են ենթարկված «Բանք առ սեակիր գայլանման» բանաստեղծության մեջ: Սրամիտ այս պարողիան կառուցված է տերունական աղոթքի առաջնորդող տողերով, որոնք ընդմիջարկվում են ոչնչացնող բացատրություններով: Թեև գրաբարադիր, այսուհանդերձ այս բանաստեղծությունը հանդեսի հակակղերական ամենահաջողված ելույթներից է: Այն, անկասկած, մեծ դժգոհություն պետք է որ առաջացրած լինի հոգևորականության շրջանում, որովհետև դրա տպագրությունից մեկ ամիս անց պարբե-

րականը ստիպված էր հայտնել, որ այն ուղղված է եղել սոսկ կաթուղի կղերի դեմ¹⁴։

Հակակղերական բովանդակություն ունի նաև Աղ. Փանոսյանի «Բացառաբար» բանաստեղծությունը, որ վերաբերում է կրոնական պետերի ընտրությանը։ Պարբերականում Փանոսյանը տպագրել է նաև այլ բանաստեղծություններ. նա ունի զարդարուն ոճ, լեզուն դեռևս չի հասել ժամանակի աշխարհաբարի մշակված պարզությանը, ուստի հայիվ թե այս առումով նրան կարելի լիներ դասել Զոհրայի և Ալիբարի շարքը¹⁵։ Սակայն, եթե մի կողմ թողնենք Փանոսյանի որոշ բնագրերի հակումները, իր բանաստեղծական թարմ մտածողությամբ ու արվեստով Փանոսյանը, անշուշտ, սեփական խոսք էր ասում 1880-ական թթ. արևմտահայ պոեզիայի մեջ։

1880-ական թթ. «Արևելյան մամուլը» տպագրել է Ծ. Տեմիրճիպաշյանի բանաստեղծությունները՝ «Տաղարան», «Ասիական առավոտը» և «Ասիական երեկոյը» խորագրերով։ Բանաստեղծն օգտագործել է «Թեվանիո» ծածկանունը, որ հայտնի է դառնում Մամուրյանի ծանոթագրություններից, և Գրասեր Ատոմին ուղղված դիտողություններից, ինչպես և վերջինիս պատասխանից¹⁶։ «Ասիական առավոտը» լի է Տեմիրճիպաշյանին հատուկ հոռետեսական, միաժամանակ խոհական տրամադրություններով։ Նրկորոգ մասում այն շնչում է որոշ կենսասիրությամբ, թեև պահպանում է պատկերի վերացականությունը։ «Ասիական երեկոյը» արդեն հագեցած է թանձրամած միստիկայով և մահվան մոռյլ տեսիլներով։

Տեմիրճիպաշյանի այս ստեղծագործությունները մի որոշ չափով արտահայտում են ազգային աղետներից հուսաբեկ արևմտահայ մտավորականության մի մասի ընկճված խոհերը։ Այստեղ առկա է նաև ուժանտիզմի պոեզիայի, մանավանդ կամարթինի ազդեցությունը, սակայն հիմնականը իրականության ողբերգականության ընկալումն է։ Ուշագրավ է, որ Տեմիրճիպաշյանն ընդգծում է իր բանաստեղծական հոգեհարազատությունը Դուրյանի թախծոտ մոտիվներին։ «Ասիական առավոտի» առաջին մասը վերնագրված է «Առ Պետրոս Դուրյան» և կրկին ցույցնում է բանաստեղծի հուսահատական մտորումները։ Ելք չգտած և անհատին ներքուստ բալբայող սիրո հիվանդանուն ուժն է արտահայտում նույն շարքի «Նրազ մը» բանաստեղծությունը։ Այդուհանդերձ, Տեմիրճիպաշյանի պոեզիան իր ընդգծված հոռետեսությամբ մասամբ միայն կարող էր առնչվել Դուրյանի՝ մեծ կրքերի ու հոգեբանության «անհատակ խորություն» ունեցող արվեստին¹⁷։

Արևմտահայ պոեզիայում Տեմիրճիպաշյանը ուժանտիզմի խոշոր ներկայացուցիչներից է։ 1880—1890-ական թթ. նրա պոեզիան, ազգային իրականության աղետներից հուսաբեկ, տալիս էր իր միակողմանիության ասպարեցությունը՝ կողմնորոշվելով հիմնականում դեպի ուժանտիկների հուսակտուր տրամադրությունները։ Հակառակ ուսույթական գրականության որոնումների, որն իր արմատները տարածում էր պավառական իրականության մեջ, Տեմիրճիպաշյանի ուժանտիկական պոեզիան դիմում էր ներվանայի և նե-

¹⁴ «Արևելյան մամուլ», 1885, էջ 47։

¹⁵ Զ. Գալեմբյարյան, Կյանքիս ճաթերն, Անթիլիաս, 1952, էջ 60։

¹⁶ «Արևելյան մամուլ», 1885, էջ 313—314, 335—336։

¹⁷ Ա. Ա. Խառատյան, Պետրոս Դուրյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 43։

րանձնացման մեկուսի ափերը: Ձևով այն հակվում էր առավելապես դեպի արևմտյան պոեզիան՝ խորքում պահպանելով ազգային իրականությունից ձևով թախծոտ իրատեսությունը: Անկախ ունակիցմը հիմնավորող իր տեսական դատողություններից¹⁸, Տեմիրճիպաշյանը հավատարիմ էր մնում ումանտիկական պոեզիայի սկզբունքներին:

«Արևելյան մամուլը» նշանակալի ծառայություն ունի ժողովրդական բանահյուսության նմուշները ժողովրդականացնելու գործում: Այստեղ ակնառու է Գ. Մրվանձտյանցի աշխատակցությունը: Նա տպագրել է Մուշի, Վանի, Տիգրանակերտի, Բուլանլիսի, Մոկաց սիրերգերն ու կենցաղային խաղիկները: Մրվանձտյանցի օրինակին հետևեց Հայր ստորադրությամբ բանահավաքը (Ստ. Կանայան)¹⁹, որ արժեքավոր նմուշներ է հրատարակել Արարատյան դաշտի (Երևան, Իզդիր), Մոկաց և Ռշտունյաց բանահյուսությունից:

1890-ական թթ. գեղարվեստական գրականությունը դառնում է պարբերականի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը: Թուրքական համատարած ռեակցիայի պայմաններում գեղարվեստական գրականությունը արևմտահայ մամուլում ձեռք է բերում առաջատար նշանակություն հրապարակախոսության համեմատությամբ և փաստորեն պայմանավորում այդ մամուլի հասարակական ուղղությունը: Կարծում ենք, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի մամուլը բնութագրելիս ծանրության կենտրոնը, ըստ էության, պետք է տեղափոխվի գեղարվեստական գրականության ճանաչողական այդ արժեքի վրա, որովհետև գրաքննությունից հետո հրապարակախոսությունից գրեթե ոչինչ չէր մնում²⁰, մինչդեռ գեղարվեստական գրականությունը, այնուամենայնիվ, կարողանում էր պահպանել իր հասարակական ներգործության ուղղակի հնարավորությունները: Ուստի և «Արևելյան մամուլի» առաջադիմական նշանակությունն այս շրջանում ամենից առաջ պետք է որոնել նրա գեղարվեստական գրականության մեջ:

1890-ական թթ. պարբերականի շափածոն ունի քնարական, սոցիալական, ազգային ընդարձակ թեմատիկա, բանաստեղծները հիմնականում ումանտիկներ են, որոնք ընկճված տրամադրություններով են տոգորում իրենց հերոսին (Աղեքսանդր, Ա. Շաբլյան, Մ. Վարպետյան, Բյուրեղ, Մ. Տամկաճյան և ուրիշներ):

Դեռևս որոշակիորեն չձևավորված, տարտամ այս բանաստեղծական մտորումների կողքին և դրանից հետո էր, որ ծնվեց «Արևելյան մամուլի» իսկական պոեզիան: Ըստ էության, պարբերականի քաղաքացիական պոեզիան ըսկըսվում է Ա. Չոպանյանի «Երջանկությունը» բանաստեղծությամբ: Բանաստեղծը դժգոհ էր իրականությունից, բայց այդ դժգոհությունը հանգում է ակտիվ իմաստավորման, որովհետև երջանկություն ասվածը պետք է որ գոյություն ունենա: Կենսասիրական մղումներով դրան է աղերսվում «Երջանկություններ» բանաստեղծությունը, որ հայտաբերում է նաև դուրյանական պոեզիայի հմայքը Չոպանյանի ստեղծագործության վրա²¹:

¹⁸ «Очерк развития эстетической мысли в Армении», М., 1976, էջ 174; «Հայ նորգրականության պատմություն», հատ. 4, Երևան, 1972, էջ 425:

¹⁹ Հ. Ա ճ ա ո յ ա ն, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 205—206:

²⁰ «Նոր կյանք», Հոնգոն, 1899, էջ 299:

²¹ Գ. Ն. Ս տ ե լ ի ա ն յ ա ն, Արշակ Չոպանյան, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 134:

Ա. Չոպանյանով սկսված տեղաշարժը պարբերականի էջերում սուսավել նկատելի է դառնում Ռ. Որբերյանի ստեղծագործություններով: Որբերյանի գործերը ներծծված են ազգային աղետի ապրումներով, իսկ նրա ստեղծագործական ուղին ձգվում է այդ տրամադրություններից բխող ընթացքի մեջ²²: Ժողովրդի ողբերգական առօրյան բանաստեղծը ցուցադրեց հասարակական մեծ հնչեղություն ունեցող պատկերներով: «Արմաշի հոգին» արևմտահայերի կյանքի իրական հոգևոր վերարտադրությունն է, նրանց հույսերի ու ձգտումների գեղարվեստական անդրադարձը: Գարուն շունեցող, բայց արշալույսներ երազող ժողովրդի գոյատևման ձգտումները Որբերյանի, ինչպես և Սեծարենցի, Վարուժանի և Սիամանթոյի ստեղծագործություններում անդրադարձել են իրենց ընդհատություն և անընդհատության մեջ: Բանաստեղծի գործերը արտացոլում են աղետներով լեցուն ժամանակի այս կամ այն պահ, դրանից հլիք գտնելու արդյունքները: «Կցկտուր խոսքեր» խորագրով բանաստեղծություններում քնարական հերոսի միայնակությունը թանձրանում է անընդհատ բարդվող պատկերներով, մինչև որ նրա վիշտը հասնում է տիեզերական չափերի, որ համոզիչ է և պատճառաբանված: «Սա վիշտերով Անհունին իսկ սարսուռ տալ կուզեմ ես», — գրում է բանաստեղծը: Անհունը՝ դա մթամած հորիզոնն է, «ա՛հավոր ու անլույծ էն», որից այն կողմը բանաստեղծը ձգտում է նշմարել իր ժողովրդի անցնելիք ուղին:

Մեծ անարդարությունն իր ժողովրդի նկատմամբ բանաստեղծին մղում է քնարական խորհրդածությունների՝ իրադարձությունների մեջ նույնիսկ ամենաընդհանուր իմաստով պատճառական կապ գտնելու համար: Բայց այդ կապի չգոյությունը շարժելով է նրա հոգին բազում կորուստների ցավով, որ և նրան հասցնում է արժեքների վերարժեքավորման այն դրամատիկ վիճակին, որի առջև կանգնած էին հանիրավի կոտորվող ժողովրդի բանաստեղծները: Որբերյանն այդ անում է հոգեբանական նուրբ անցումներով: Աստծո գաղափարը անշքանում ու խամրում է քնարական հերոսի հոգում՝ գոյացնելով մի մեծ անդունդ, անծանոթ և անիմանալի («Ահա աստված»): Եվ սահում են մեղմ, էլեգիական խոհերը, մնում է երազը, հավատը ինչ-որ բանի, թեկուզև իրեն սպասած գաղափարի նկատմամբ:

Գարձիր, անուշ երազ կյանքիս մոլորուն.

Օ՛, մինակ եմ, քեզ սլաշարիմ անդադրում.

Գարձիր, աստված իմ մանկային օրերուն:

«Արևելյան մամուլում» Որբերյանի տպագրած բանաստեղծություններում հետզհետե իր իրավունքն է հաստատում իրականության դեմ ընդվզող ոգին, որ իրենով է լցնում ամայացած հոգիները և դառնում բանաստեղծի վշտի բնականոն հետևորդը: Միայնակության զգացումները բանաստեղծը հաղթահարում է հակասական խոհերով, որտեղ իրենց զգացնել են տալիս նրա հայրենասիրական մոտիվներին հատկանշական հույսը և կարողությունը («Մաղկանոցի նոճին», «Նոր տարի», «Հակապատկեր»)²³: Կենսասիրական տրամադրություններ ևն արտահայտում դարավերջին հանդեսում տպագրած նրա մյուս գործերը ևս

²² Վ. Գաբրիելյան, Ռուբեն Որբերյան, Երևան, 1964, էջ 61:

²³ Երևանի Որբերյան, Երևան, 1963, էջ 9 (ե. Պետրոսյանի առաջաբանը):

(«Քնարին», «Փափաքը», «Ժամացույց»), որոնք բացահայտում են նաև ցավի և կորուստների միշտ առկայծող գիտակցությունը:

Որբերյանի պոեզիան ևս «Արևելյան մամուլը» դարձնում է հասարակական-քաղաքական իրականության մեջ շնչող հրատարակություն: Հանձին Որբերյանի, Զմյուռնիայի հայ մամուլը հաղթահարեց իր համար դժվար մատչելի՝ ազգային բանաստեղծության նորօրյա շափանիչները: Դա արտահայտությունն էր այն իրողության, որ պարբերականի դեմոկրատական բովանդակությունն ապրում էր որոշակի տեղաշարժ՝ անցում կատարելով հրապարակախոսությունից դեպի գեղարվեստական գրականություն:

1890-ական թթ. «Արևելյան մամուլում» ռեալիստական գրականությունը մուտք է գործում Մ. Գոշունյանի ստեղծագործություններով: Մ. Գոշունյանը (Քասիմ, Քասիմդուխտ ծածկանուններով) պարբերականին նախ աշխատակցել է հրապարակախոսական հոդվածներով: «Ազգային նիշեր» վերնագրով նրա թղթակցություններում, չնայած գլխաբանությունն ապակողմնորոշող դատողություններին, զգացվում է հրապարակախոսի խորին դժգոհությունն իրականությունից: Գոշունյանն ազատ խոսքի և մամուլի համոզված կողմնակից է: Աշխարհայացքային իմաստով նա որոշակիորեն ազդվել է Մամուլյանի, մանավանդ Պարոնյանի դեմոկրատական հայացքներից: Ավելին, նրա որոշ գործերում (ինչպես, օրինակ, «Օրթագեղը երեակայականին և իրականին մեջ» ֆելիետոնում) ակնառու է Պարոնյանի «Պտույտ մը Պոստ թաղերուն մեջ» և «Մեծապատիվ մուրացկաններ» երկերի ազդեցությունը՝ երգիծվող օբյեկտը ներկայացնող պատկերների, այլև նպատակի տեսակետից:

Գոշունյանի հրապարակախոսության տարերքը Կ. Պոլսի հայ հասարակական ու մշակութային իրականությունն է²⁴, ուր նա հանդես է բերել հիանալի իմացություն, իրողությունները նրբամտորեն և ճաշակով ներկայացնելու լայն կարողություններ: Նրա հոդվածները, որ արևմտահայ երգիծական քրոնիկի զարգացման նոր փուլն են, առաջադրումներով և հասարակական նպատակաուղղվածությամբ մեկնում են հասարակ ժողովրդի շահերից: Դրանցում քննադատվում են Ազգային վարչությունն ու պատրիարքարանը, բարձրաստիճան կղերը և ազգային լուսավորության նկատմամբ անտարբեր մեծատունները: Նուպար-Շահնազարյան դպրոցի շենքի վաճառքի կապակցությամբ Քասիմը երգիծական հաջողված ձևի մեջ դիպուկ ծաղրածանակի է ենթարկել պոլսահայ վերնախավի սնամեջ առօրյան և բարոյազրկությունը: Քասիմի երգիծանքի առանձնահատկությունը, թերևս, նրա կոնկրետության մեջ է. իրական դեպքերի հիման վրա նա ստեղծում է հրեույթի արտաքուստ խեղճած, բայց թանձրացական-ճշմարտացի պատկերը՝ հասնելով ճանաչողական մեծ ընդգրկումների: «Արևելյան մամուլում» Գոշունյանը մշտական հարձակումների թիրախ է ընտրել տգետ բժիշկներին, կարծեցյալ խորագետ մանկավարժներին և այլն: Նրա երգիծանքին հատուկ են անսպասելի, կտրուկ անցումները և դրանով իսկ՝ տարասեռ երգիծվող երևույթների մեջ պատճառական կապերի սրամիտ հայտնաբերումը: Երգիծաբանը մի տեղ նկատում է, որ Զվիցերիայից եկած դիմագետ-տեսուչը թուրքիկ հայացքով իսկ կարող է նրկատել անպետք աշակերտին: «Այժմ երկյուղ կա,— գրում է նա,— որ Զվիցերիայի տեսուչը օր մը Ազգային ժողովը կայցելի: Եվ և հոն ալ դիմագիտական

²⁴ Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հատ. Ա, Երևան, 1973, էջ 251:

արհեստը գործադրե, նորոգ ընտրություն կատարել պիտի ստիպվինք, կըսվի»²⁵:

«Ազգային նիշեր» շարքում երթեկում են մանրբուրժուական խավերը, մանր առևտրականը, կոմիսիոները, պաշտոնյան կամ մտավորականը: Քասիմի գրչի տակ սրանք առավել ևս հանդես են եկել իրենց հասարակական վիճակից բխող զավեշտական իրադրության մեջ, քան շարությամբ: Նման քրննադատությունը, ըստ էության, ուղղվում է արևմտահայ իրականության ստվերոտ կողմերի՝ բարքերի անկման, հաշվենկատության, սնամտության և ընդհանրապես բարոյական «դարավերջիկ» արուստների դեմ, և արդեն ստանում բացասման ավելի մեծ արժեք, քան ունեն այդ գծերի կոնկրետ կրողները:

Քասիմի հրապարակախոսությունը, երգիծանքի բարձր արժանիքներով, մանավանդ ճոխ ու ձկուն արտահայտչամիջոցներով, անկասկած, «Արևելյան մամուլը» օժտում է հասարակական սրությամբ: Քասիմը ստեղծել է խոսքի և գործողության, դինամիկ կոմիդիի սքանչելի օրինակներ՝ շարունակելով հայ երգիծաբանության մի քանի լավագույն կողմերը:

Խիստ դժվար է Գոշունյան-արձակագրի և հրապարակախոսի սահմանները զանազանելը, թերևս՝ գործողության որոշակի զարգացմամբ և կերպավորման տարբերությամբ միայն: Պատմվածքները գերազանցապես վերաբերում են նույն խավերին, որոնց արդեն տեսանք նրա հրապարակախոսության մեջ: Այս գործերում երգիծվում են վերնախավի երիտասարդության հոռետեսությունն ու կենսատեսությունը, որ, ըստ հեղինակի, կեցվածք է, շինծու պաթոս («Մխիթարական թուղթ իմ հոռետես բարեկամիս», «Ով է պատասխանատուն, որ ես ճաշակիս հարմար ամուսին մը չեմ կրցած գտնել»): Գոշունյանը երգիծում է արևմտահայ ոչ գործնական կրթության հետևանքները («Ինչու ամեն գլխարկավոր գրագիր չէ») և այլն:

Հանդեսում իր առաջին գործերն է տպագրել և այնուհետև ակտիվորեն աշխատակցել Հ. Ալփիարը: Մեզ հետաքրքրող շրջանում տպագրվել են նրա «Պաշիկը», «Կանացի դիմաստվերներ» (1894—1895) պատմվածքները, որոնց բովանդակությունը չի անցնում կենցաղային երգիծանքից: Ալփիարը դրսևորել է երգիծաբանի իր ակնառու տաղանդի նշանները, հաջողված սրամտություններն ու դիպուկ ակնարկները: Նա ևս սլաքներն ուղղում է քաղքենիական սովորությունների և հոգեբանության դեմ:

Հանդեսում 1890-ական թթ. տպագրվել են Վաղուժանի²⁶ «Մտածին պատկերները»՝ դիմանկարային շարք, որտեղ հեղինակը ձգտել է պատկերել իր ժամանակի երիտասարդության հոգեբանությունն ու բարոյական մղումները: Այն պետք է դիտել որպես փորձ՝ պատկերելու այդ բարոյական աշխարհում կատարված տեղաշարժերը, ազգային իրականության ազդեցությունը դրանց վրա: Այս հանգամանքը ընդհանրության հող էր հարդարում այս շարքի և ազգային իրականությունը պատկերելուն հետամտող արևմտահայ գրական շարժման մեջ: Գրեթե նույն բովանդակությունն ունեն Հ. Մամուրյանի պատմվածք-

²⁵ «Արևելյան մամուլ», 1890, էջ 105:

²⁶ Դժուար է բացահայտել, թե ով է թաքնված այս ծածկանվան տակ, սակայն պետք է նկատել, որ ունի միևնույն վերացականությամբ ու թեմատիկ ընդհանրությամբ Վարուժանի հիշեցնում է Հ. Մամուրյանին:

ները: Հ. Մամուրյանը, սակայն, լավ չի ճանաչում գավառական միջավայրը, որի մասին իր պատկերացումները ամբողջացրել է Մամուրյան-հոր գաղափարական ուժեղ ազդեցությամբ («Մոր մը զոհ», «Լքյալ սիրտ», «Գերեզմանի մ' առջև» և այլն):

Սիրո, ընտանիքի, ամուսնության վերաբերյալ արձակով հանդես են եկել նաև Մ. Նուպարյանը, Ղ. Վարպետյանը, Գր. Հակոբյանը և այլ արձակագիրներ, որոնց բարոյական միտումը, սակայն, չի դրսևորվել համապատասխան արվեստով, ուստի դրանք թողնում են հրապարակախոսական արձակի տպավորություն: Իրական միջավայր պատկերելու իրենց փորձով այս ստեղծագործությունները ևս չէին հասնում արևմտահայ ռեալիստական արձակի մակարդակին, սակայն նպաստում են ըմբռնելու գրական պրոցեսի վարդաքան ընթացքը:

Պարբերականի արձակում ճանաչողական կարևոր նշանակություն ունեն Մ. Նուպարյանի «Իմ մանկական հիշատակներես» և Մ. Մամուրյանի «Իմ հուշագրերս» գործերը: Դրանցում վավերագրական հարուստ նյութեր կան զմյուռնահայ համայնքի ազդային-հասարակական, մշակութային իրականության և գործիչների վերաբերյալ: Այդ հուշագրերում վերսկենդանանում են վաղեմի զաղթօջախի իրականության պատկերները՝ սկսած անցյալ դարի 40-ական թթ. մինչև 80—90-ականը:

«Արևելյան մամուլում» թեմատիկ նորույթով ուշագրավ է Գր. Հակոբյանի «Գաղտնիսույզ Նորենց» պատմվածաշարը: Այն դետեկտիվի ժանրի առաջին հայտնություններից էր արևմտահայ արձակում, որ կրում է Կոնան Դոյլի ազդեցությունը: Հեղինակը ցուցադրել է սույն կոնֆլիկտներով լի, լարված և հետաքրքիր սյուժե ստեղծելու իր վարպետությունը: Պատմվածքներում կա այն ամենը, ինչ հատուկ է այդ ժանրին՝ փաստերի համադրում, վերլուծություն և եզրահանգում: Սակայն Նորենցի բացահայտումները չեն դառնում իրականության կարևոր հակասությունների բացահայտումներ և այս իմաստով նրա քննախույզ միտքը մնում է առօրեական մտավարժանքի սահմաններում, որով և տարբերվում է անգլիացի գրողի ընդհանրացնող որակից: Միանգամայն իրավացի է Վ. Փարթամյանն այս կապակցությամբ, ըստ որի, հեղինակի բարոյախոսությունը «... կենցաղային նեղ հարցադրումից հասարակական հնչեղության չի հասնում»²⁷:

Արևմտահայ թարգմանական գրականության զարգացմանը զորեղ մղումներ է տվել Զմյուռնիայի թարգմանական դպրոցը, որի ստեղծած ավանդույթները հարատևեցին մինչև զաղթօջախի ողբերգական վախճանը: Թարգմանական գրականության այս ամբողջական զարգացման ընթացքի մեջ «Արևելյան մամուլին» վերապահված էր ստեղծված մշակութային արժեքները ստվարացնելու և գրական առնչությունները ընդլայնողի դերը: Նրա խմբագիրը անշափելի երախտիք ունի այս քնազավառում: Բացի առանձին հրատարակություններով լույս ընծայած իր թարգմանություններից, նա հանդեսում իրագործել է վիթխարի աշխատանք՝ թարգմանելով Վ. Սկոտի «Իվանոն», Դ. Միտչելի «Ամուրիի մը երազները», Գրենվիլի «Մորելվին քավումը», Ժ. Օնեի «Կարապի երգը», է. Դըրրերի «Մանկիկի մը վեպը», Հ. Գնվեի «Մուր օրերը», «Նավարե ի լույսը», Ֆ. Հյումի «Ջեներկույթ պարոնը» և այլն: Թարգմանական իր վիթ-

²⁷ Վ. Փարթամյան, Հայ-անգլիական գրական առնչություններ, Երևան, 1975, էջ 255:

խարի գործունեությունը Մամուրյանը մնում է եզակի երևույթ մեր զրականության պատմության մեջ²⁸։ Նրա թարգմանած երկերը մեծ մղումներ են տրվել արևմտահայ գրական լեզվի զարգացմանը և ուսումնառության դպրոց հղել շատ սերունդների համար։ Եթե 1850—1860-ական թթ. Մամուրյանի թարգմանություններն անմիջականորեն խթանել են արևմտահայ գրականության աշխարհականացումը, ապա հետագայում ձեռք են բերել այլ նպատակաուղղվածություն՝ ընթերցողին պատվարելով Արևմուտքի անկումային զրական արտադրանքի ներմուտից։

«Արևելյան մամուլի» թարգմանական զրականության մյուս խոշոր դեմքը Մ. Նուպարյանն է։ Եթե Մամուրյանը գերազանցապես թարգմանում էր անգլիական զրականությունից, ապա Նուպարյանն այդ անում էր ֆրանսիական բնագրի մարզում։ Հանդեսում նա տպագրել է Բուալույի, Մուլիերի, Լասինի, Լաֆոնտենի, Վ. Հյուգոյի, Ա. Վինյի, Մուպասանի, Լեժանդրի, Անդրեյի, Վակարեսկոյի, Ս. Պրյուդոմի, Պ. Ֆելալի և այլոց շափածո և արձակ ստեղծագործությունների թարգմանությունները։ Հնդհանրապես ֆրանսիական դասական զրականության մասին իր իրազեկության համար արևմտահայ ընթերցողը շատ բանով պարտական էր Նուպարյանին։

Թարգմանական ոլորտից չէր անհեռապես նշանակալի տեղ է նվիրել նաև ռուս զրականությանը։ Մամուրյանն իր պարբերականը ծառայեցնում էր ռուս զրականության պրոպագանդին, որ լայն ընդգրկումներ էր առել ժամանակի արևմտահայ մամուլում, մանավանդ «Հայրենիք», «Մասիս», «Արևելք» և այլ պարբերականներում։ Ռուս զրականության թարգմանությամբ հանդես է եկել Ստ. Կանայանը (Արմեն, Հայք, Հայ-Արմեն ստորագրություններով), որը տպագրել է Պուշկինի, Լերմոնտովի, Պլեշկեի, Յիգանովի ստեղծագործություններից։ Ըստ ամենայնի ըմբռնելով ռուս զրականության համամարդկային նշանակությունը, «նրա նկադրությանը բնատուր ու զորեղ» կողմերը, Մամուրյանը հայացքը դեպի այդ զրականությունն էր հառում նաև մի այլ կապակցությամբ։ Յուրյա տալով արևելահայ զրականության ժողովրդագրությունն ու իրականության լայն և ճշմարտացի վերարտադրման կարողությունները, Մամուրյանը բացահայտում էր այն ճշմարտությունը, որ նշված այդ արժեքներն արևելահայ զրականությունը ձեռք է բերել նաև դեպի ռուս զրականությունն ունեցած իր կողմնորոշմամբ։ Հետագայում զարգացնելով այս ավանդույթը, «Արևելյան մամուլը» թարգմանաբար տպագրեց Մ. Գորկու, Լ. Տոլստոյի, Ա. Տոլստոյի, Լ. Պոլոնսկու և այլոց ստեղծագործությունները։ Իրանով հանդեսը համեմատելիս էր առաջադիմական հայ մտավորականության այն մտայնությանը, որ կարևոր նշանակություն էր տալիս ռուս զրականության գաղափարայնությանն ու հումանիզմին առնչվելուն²⁹։

Առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել «Արևելյան մամուլը» Շեքսպիրի ստեղծագործության նկատմամբ։ Դարավերջի անկումային հոսանքների դեմ մղվող պայքարում պարբերականը անգլիացի դասականի երկերը պրոպագանդել է ամենից առաջ գաղափարայնության տեսակետից։ Այս դիրքորոշումը առաջինն արտահայտեց Բ. Որբերյանը՝ «Ուիլյամ Շեքսպիր» քննական-

²⁸ Ա. Ա. Խառատյան, Ձայունիտ տպարաններ, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 83։

²⁹ Г. А. Галоян, Россия и народы Закавказья, М., 1976, էջ 329.

կենսագրական հոգվածով³⁰։ Այնուհետև հանդես եկավ Ա. Նավարյանը՝ Շեքսպիրի ստեղծագործությունների և շեքսպիրյան եվրոպական բեմադրությունների վերլուծությամբ (1897—1899 թթ.)։ Նավարյանը փորձում էր Շեքսպիրի երկերը դիտել պատմական-հասարակական կոնկրետ իրականության մեջ։ Նրա այս ուսումնասիրությունների նշանակությունը մեծանում է այն հանգամանքով, որ արևմտահայ ընթերցողին է ներկայացնում ընդհանրապես շեքսպիրադիտական մտքի դարգացումը՝ հանձին Ա. Բենսոնի, Կոլրիջի, Սպենսերի ու թեև՝ Ուշագրավ են Համլետի, Դեղգեմոնալի, Օթելլոյի, Յագոյի, Ռոմեոյի, Զուլիետի կերպարների վերլուծությունները։ Նավարյանն այդ կերպարների մեջ որոնում-ցուցադրում է նրանց համամարդկային կողմերը, որով և բացատրում է շեքսպիրյան դրամատուրգիայի անանց հմայքը բոլոր ժամանակների համար։ Նա անդրադարձել է նաև Շեքսպիրի սոնետներին և բացահայտել քնարական հերոսի հակասություններով լնցուն ներքնաշխարհի անհամատեղելիությունն իր ժամանակի իրականության հետ։ Նավարյանի ընդհանրացումները կաշկանդվում են այնտեղ, որտեղ նա փորձում է Շեքսպիրի կենսագրական հանգամանքներն անմիջականորեն աղեղսել նրա ստեղծագործությանը։

1899-ին պարբերականը տպագրեց «Վենետիկի վաճառականը»՝ զմյուռնացի Լ. Պալլոզյանի թարգմանությամբ։ Նույն թվականին, դարձյալ զմյուռնացի Գ. Բաբայանի թարգմանությամբ Վենետիկում հրատարակվել էր Շեքսպիրի «Համլետը»։ Այս առթիվ «Արևելյան մամուլը» տպագրեց խոսնակի (Հ. Ֆերմանյան)³¹ հոգվածը, որ հետաքրքրական մտքեր է պարունակում նաև «Համլետի» հայերեն նախորդ (Ս. Արծրունու և Հ. Սառեհյանի) թարգմանությունների վերաբերյալ։ Շեքսպիրի ստեղծագործությունը պարբերականի համար դառնում էր նշանակալի միջոց՝ համազգային մշակութային կյանքին հաղորդակցվելու և նրա զարգացման ընթացքի վրա ներգործելու համար։

Իր հրատարակության առաջին տասնամյակներին «Արևելյան մամուլը» տպագրել է ռոմանտիկական գրական երկեր, որոնք բխում էին նրա լուսավորական և ազատագրական պայքարի գաղափարներից։ 1880—1890-ական թթ. տպագրելով Ն. Տեմիրճիպաշյանի, Ա. Զոպանյանի, Ռ. Որբերյանի, Մ. Գոշունյանի, Հ. Ալվիարի ստեղծագործությունները, պարբերականն ընդարձակել է իր գրականության սոցիալական և ազգային թեմատիկան, որ արտացոլում էր արևմտահայ գրական պրոցեսին յուրահատուկ զարգացման ընթացքն ու տրամադրությունները։ Պարբերականի մյուս հեղինակներն իրական միջավայր պատկերելու փորձով չէին հասնում արևմտահայ ռեալիստական գրականության մակարդակին, սակայն նրանց երկերը նույնպես են ըմբռնելու գրականության զարգացման վերը նշված ընթացքը։

Թարգմանական երկերի հրատարակությամբ «Արևելյան մամուլը» խթանել է հայ ռեալիստական գրականության ու մշակույթի դեմոկրատական և հումանիստական կողմնորոշումը։

30 «Արևելյան մամուլ», 1897, էջ 492—495։

31 Թ. Ե. Դ. Կ., Ամենուն տարեցույցը, 1927, էջ 349։

ХУДОЖЕСТВЕННАЯ ЛИТЕРАТУРА В ЖУРНАЛЕ «АРЕВЕЛЯН МАМУЛ»

А. А. ХАРАТЯН

(Резюме)

В журнале «Аревелян мамул» (Смирна, 1871—1909) нашли отражение некоторые стороны развития западноармянской литературы в конце прошлого века. Характерно, что журнал публиковал не только романтические, но и реалистические произведения. В нем печатались Г. Патканян, Р. Патканян, М. Мамурян, М. Налбандян, М. Садатян, Раффи, Е. Темирчибашян, Р. Ворберян, М. Гочунян и другие писатели. Национально-социальное и лирическое содержание их сочинений характеризует в общем демократическое направление журнала. Переводами образцов русской и западноевропейской литературы журнал способствовал демократической и гуманистической ориентации западноармянской литературы указанного периода.